

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ (2024թ.)

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը	Արդյունքը																																												
Մակերևութային ջրեր	-																																																
Ստորերկրյա ջրեր	-																																																
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, 1.Y=8435522 X=4435354	- հանքափոշի, (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, ծծմբային անհիդրիդ,	նմուշառում, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական անգամ՝ 24 տևողությամբ մեկ ժամ	Կետ թիվ 1																																												
					<table><tr><th rowspan="2">անվանումը</th><th colspan="4">Էռամսյակներ</th></tr><tr><th>I</th><th>II</th><th>III</th><th>IV</th></tr><tr><td>Փոշի PM2.5 մգ/մ³</td><td>0,015</td><td>0,011</td><td>0,018</td><td>0,62</td></tr><tr><td>Փոշի, PM10 մգ/մ³</td><td>0.038</td><td>0.09</td><td>0.028</td><td>0.42</td></tr><tr><td>Ազոտի երկօքսիդ</td><td>0.009</td><td>0.01</td><td>0.008</td><td>0,78</td></tr><tr><td>Ածխածնի օքսիդ</td><td>0,008</td><td>0,015</td><td>0,011</td><td>1,8</td></tr><tr><td>Ածխաջրածիններ սահմանակլին</td><td>0,001</td><td>0,002</td><td>0,001</td><td>0,2</td></tr><tr><td>Ծծմբական անհիդրիդ</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>8.0</td></tr><tr><td>Մոխիր</td><td>0.001</td><td>0.001</td><td>0.001</td><td>0.2</td></tr></table>	անվանումը	Էռամսյակներ				I	II	III	IV	Փոշի PM2.5 մգ/մ³	0,015	0,011	0,018	0,62	Փոշի, PM10 մգ/մ³	0.038	0.09	0.028	0.42	Ազոտի երկօքսիդ	0.009	0.01	0.008	0,78	Ածխածնի օքսիդ	0,008	0,015	0,011	1,8	Ածխաջրածիններ սահմանակլին	0,001	0,002	0,001	0,2	Ծծմբական անհիդրիդ	-	-	-	8.0	Մոխիր	0.001	0.001	0.001	0.2
					անվանումը		Էռամսյակներ																																										
						I	II	III	IV																																								
					Փոշի PM2.5 մգ/մ³	0,015	0,011	0,018	0,62																																								
					Փոշի, PM10 մգ/մ³	0.038	0.09	0.028	0.42																																								
					Ազոտի երկօքսիդ	0.009	0.01	0.008	0,78																																								
					Ածխածնի օքսիդ	0,008	0,015	0,011	1,8																																								
					Ածխաջրածիններ սահմանակլին	0,001	0,002	0,001	0,2																																								
					Ծծմբական անհիդրիդ	-	-	-	8.0																																								
Մոխիր	0.001	0.001	0.001	0.2																																													
Ավագի արդյունահանման աշխատանքների ընթացքում օդի արտանետումների միջինացված քանակները՝																																																	
Անօրգանական փոշի – 1.04տ (0.032/վրկ)																																																	
Ազոտի երկօքսիդ – 0.78տ (0.112գ/վրկ)																																																	
Ածխածնի օքսիդ – 1.8տ (0.260գ/վրկ)																																																	
Ածխաջրածիններ սահմանային – 0.2տ (0.028գ/վրկ)																																																	
Ծծմբային անհիդրիդ - 8տ (1.157գ/վրկ)																																																	
մոխիր – 0.2 տ (0.028 գ/վրկ)																																																	

Հողային ծածկույթ	Նմ.N1. Y=8435290 X=4435140	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանական հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն,	- տարեկան մեկ անգամ	ՀՀ	Նմուշի ծածկագիր և վերջման տեղը			
						Որոշվող ցուցանիշ			
						N1			
					1.	Ջրածնային ցուցիչ			
						8.4			
					2.	Էլեկտրահաղորդականություն (μS/սմ)			
						26,8			
						Քիմ.տարրը	Պարունակ. %	Պետրոգեն տարրերը	Պարունակ. %
					3.	Fe,	3.2	SiO ₂	48.71
					4.	Mn,	0.07	Al ₂ O ₃	15.04
					5.	Zn,	0.002	TiO ₂	0.8
					6.	Cu,	0.01	Fe ₂ O ₃	3.3
					7.	Mo,	γ/h	FeO	2.8
					8.	Cr,	0.001	CaO	9.87
					9.	Co,	0.0001	MgO	6.56
					10.	Hg,	γ/h	CO ₂	6.41
					11.	As,	γ/h	P ₂ O ₅	0.15
					12.	Pb,	<0.0001	MnO	0.16
					13.	Ni,	0.001	Na ₂ O	2.28
					14.	Sb,	γ/h	K ₂ O	0.15
					15.	Cd	0.0001	H ₂ O	1.16
					16.	B	0.002	ΠΠΠ	2.61
					17.	Ba	0.03	Ընդհանուր	100
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ					Տես բացատրագիրը				
Աղմուկ և թրթռում	Բացահանքերի		Գրանցում ձայնաչափով	տասնօրյակը մեկ անգամ,	Տարեկան միջինը հանքավայրի սահմաններում կազմում է 52.0 ԴԲԱ, Բնակավայրերում աղմուկի				

	հարևանությամբ Y=8435294 X=4435353			աշխատանքի ժամանակ	մակարդակի չափումներ չեն իրականացվել, քանի որ բնակավայրերը գտնվում են հանքավայրից 2.5-3կմ հեռավորության վրա: Արդյունահանման աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակը գնահատվել է 70ԴԲԱ
Ոչ վտանգավոր թափոն- ներ	-	-	-	-	-
Վառելանյութի պահեստարաններ	Առկա չէ				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ	-	-	-	-	-
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակը	Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական զննում				

Տեղեկատվությունը ներկայացրեց «Արաքսի ավազան» ՍՊԸ, ՀՀ Արմավիրի մարզի Գոռի ավազի հանքավայրի Գոռ-1-ին և Գոռ- 2-րդ տեղամասեր: Հեռ.095300097

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Դեկավար

Մ. Շարինյան
(պաշտոնը, անունը, ազգանունը)



06.12.2025
(ստորագրողի տեղը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԻ ԱՎԱԶԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԳՈՌ-1-ԻՆ ԵՎ ԳՈՌ-2ՐԴ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ 2024Թ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունում ամփոփված են 2024թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի Գորի ավազի հանքավայրի Գոր- 1-ին և Գոր-2-րդ տեղամասերում և մերձակայքում իրականացված հողի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի մշտադիտարկումների արդյունքները:

Հանքավայրի իրավիճակային սխեման նմուշառման կետերով ներկայացված է նկ.1-ում:

1. Տեղամասի տեղադիրքը

ՀՀ Արմավիրի մարզի Գորի ավազի հանքավայրի Գոր -1-ին և Գոր - 2-րդ տեղամասերը գտնվում են ՀՀ Արմավիրի մարզում Ջրառատ բնակավայրից հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախ ափին: Տեղակայված է հայ-թուրքական պետական սահմանի հարևանությամբ, բաղկացած է երկու տեղամասերից և զբաղեցնում է մոտ 2.3 հա մակերես (1-ին տեղամաս-0,8 հա, 2-րդ տեղամաս 1,5 հա):

Տեղամասերը գտնվում են Ջրառատ բնակավայրից համապատասխանաբար 2.7 և 2.5 կմ հեռավորությունների վրա (նկ.1):

Մասիս-Երևան ավտոմայրուղու հետ հանքավայրը կապված է գրունտային 2,5կմ և ասֆալտապատ 12 կմ ճանապարհներով:

Հանքավայրի երկու տեղամասերը սահմանափակված են հետևյալ ծայրակետային կոորդինատներով(ARM WGS 84 համակարգով)

Կետի համարը	X	Y
Գոր 1 տեղամաս		
1.	4435076.0	8435128.0
2.	4435129.0	8435128.0
3.	4435112.0	8435312.0
4.	4435076.0	8435312.0
Գոր 2 տեղամաս		
5	4435163.0	8435433.0
6	4435179.0	8435403.0

7	4435363.0	8435567.0
8	4435349.0	8435667.0

2. Ռելիեֆ և երկրաձևաբանություն

Տեղամասերը գտնվում են Արարատյան դաշտի կենտրոնական մասում և ծագումնաբաններեն կապված է արաքս գետի ժամանակակից բերվածքների հետ:

Տեղանքը բնութագրվում է հարթ ռելիեֆով, որի թեքության առավելագույն անկյունը կազմում է 3-4⁰: Ծովի մակարդակից հանքավայրը գտնվում է 834-839մ բարձրությունների վրա:

3. Հողային ծածկույթ

Հանքավայրի շրջանում և բուն տեղամասերում զարգացած են աղուտ-ալկալի մարգագետնային (մարգագետնային գորշ ոռոգելի) սոդա-սուլֆատաքլորիտային հողերը:

Աղուտ-ալկալի հողերն աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15%), շերտավորված մեխանիկական կազմով:


Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի խորք (1,5մ) նրա պարունակությունը նվազում է:

Հողերի գերակշռող մասին բնորոշ է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

4. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայան հանքավայրի տարածքում և հարակից շրջանում առկա չէ:

Օգտակար հանածոն հանքավայրից արդյունահանվում է խոնավ վիճակում: Որի ժամանակ փոշու արտանետում տեղի չի ունենում, փոշու արտանետումները պայմանավորված են տրանսպորտային միջոցների տեղաշարժով:



- Պայմանական նշաններ**
- տեղամասերի եզրագծերը
 - Օձեր են հանդիպել
 - օդի որակի չափման կետ
 - Հողի նմուշառման կետ
 - աղմուկի մակարդակի չափման կետ

Նկ. 1: ՀՀ Արմավիրի մարզի Գոգտի ավազի հանքավայրի Գոգտ1-ին և Գոգտ2-րդ տեղամասերի և մոնիթորինգի կետերի տեղադրիքի սխեման:

Վնասակար գազերի արտանետումները կապված են հանքավայրում աշխատող տեխնիկական միջոցների հետ:

2024թ. ընթացքում առաջին երեք եռամսյակների ընթացքում օգտակար հանածո չի արդյունահանվել: Օգտակար հանածոյի արդյունահանում իրականացվել է միայն 4-րդ եռամսյակում: Արդյունահանված ավազի քանակը կազմում է 14470մ³: Նախագծային ծավալներից մոտ 2,6 անգամ պակաս:

Փոշու և գազերի արտանետումների քանակները չափվել են հանքավայրի աշխատանքային և հանգստի օրերին, որի ամփոփ տվյալները բերված են միջինացված տվյալները բերված են աղ.1-ում:

Աղյուսակ1

Օդի արտանետումների տեսակներն ու քանակները

անվանումը	եռամսյակներ			
	I	II	III	IV
Փոշի PM2.5 մգ/մ ³	0,015	0,011	0,018	0,62
Փոշի, PM10 մգ/մ ³	0.038	0.09	0.028	0.42
Ազոտի երկօքսիդ	0.009	0.01	0.008	0,78
Ածխածնի օքսիդ	0,008	0,015	0,011	1,8
Ածխաջրածիններ սահմանակյին	0,001	0,002	0,001	0,2
Ծծմբական անհիդրիդ	-	-	-	8.0
Մոխիր	0.001	0.001	0.001	0.2

Ստորև ներկայացվում է ավազի արդյունահանման աշխատանքների ընթացքում արձանագրված օդի արտանետումների միջին արժեքները`

Անօրգանական փոշի – 1.04տ (0.032/վրկ)

Ազոտի երկօքսիդ – 0.78տ (0.112գ/վրկ)

Ածխածնի օքսիդ – 1.8տ (0.260գ/վրկ)

Ածխաջրածիններ սահմանակյին – 0.2տ (0.028գ/վրկ)

Ծծմբային անհիդրիդ - 8տ (1.157գ/վրկ)

մոխիր – 0.2 տ (0.028 գ/վրկ)

Վերը նշված արժեքները համապատասխանում են ընկերությանը տրամադրված անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների թույլտվությանը:

5.Ջրային ռեսուրսներ

Օգտակար հանածոյի մի մասն արդյունահանվում է անմիջապես գետի միջից իսկ մյուս մասը` դարավանդից:

Արաքս գետի վարարման շրջանը, սկսվում է մարտի 20-ից և տևում է մինչև հունիսի վերջ, հնարավոր ջրհեղեղումներից խուսափելու համար կառուցվել են ափամերձ պաշտպանիչ թմբեր և պարբերաբար կատարվում է գետահունի մաքրում: Այս միջոցառումների շնորհիվ Արաքս գետի ափամերձ տարածքները պահպանվում են գարնանային վարարումների վնասակար հետևանքներից: Վարարումների ժամանակահատվածում արդյունահանման աշխատանքները դադարեցվում են:

2024թ-ից Արաքսի հունից ավազի արդյունահանում չի իրականացվում:

6.Բուսական և կենդանական աշխարհ

Տեղամասերը մտնում են Երևանի ֆլորիստիկ շրջանի մեջ, որտեղ գերակշռում է անապատային հալոֆիլ բուսականություն:

Տեղամասերի և հարակից շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ՝ ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում ի հայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով:

Տեղամասերի սահմաններում համատարած բուսական ծածկույթ չի ձևավորվում, ինչը պայմանավորված է նրանով, որ ամեն տարի Արաքս գետի վարարման շրջանից հետո տարածքը ծածկվում է ավազային, ավազակոպճային խառնուրդի նոր շերտով:

Հանքավայրի շրջանում տարածված են անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացող (*Elytrigia repens*), դաշտավուկ սոխուկային (*Poa bulbosa*) և սովորական եղեգ (*Phragmites communis*) տեսակները, որոնք աճում են գետի բնական հոսքի հարևանությամբ: Ջրային բուսականություն Արաքս գետին բնորոշ չէ, քանի որ գետի ջրերը արագահոս են և պղտոր, ինչպես նաև հազեցած են միներալային մասնիկներով:

Տեղամասերում հանդիպում են մոխրագույն ագռավ, սովորական կաչաղակ, տնային ճնճղուկ, դիտվել է նաև արտույտի թռիչք: Ավազային կուտակում նկատվել են անձրևորդեր, մրջյուններ, սարդեր, կանաչ դողոշ:

Խոշոր կաթնասուններ, դրանց բներ կամ որջեր տարածքում չեն հայտնաբերվել: Արդյունահանման աշխատանքները հանդիսանում են աղմուկի և անհանգստության աղբյուր վայրի կենդանիների համար: Չնայած դրան աշխատակիցները հանքավայրի տարածքում պարբերաբար նկատել են օձեր, որոնց տեսակը հնարավոր չի եղել որոշել:

Օձերն հանդիպել են երկու կետերում, որոնց կոորդինատներն են՝ 1. Y=8435330, X=4435273, 2. Y=8435735, X= 4435403:

Աշխատակիցներին հրահանգավորվել է օձերին չվնասել:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հանքավայրի հարակից տարածքներում:

Տեղամասում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսական կամ կենդանական տեսակներ չեն հայտնաբերվել:

Հանքավայրի մերձակայքում բնության, պատմամշակութային, ջրաբանական, ջրագրական և կենսաբանական հուշարձաններ չեն հայտնաբերվել:

7. Սեյսմիկ բնութագիրը

2024թ. ընթացքում տեղամասում և շրջակայքում լեռնային զանգվածների սահքի և քարաթափումների երևույթներ չեն գրանցվել:

8. Աղմուկի մակարդակը

2024թ. ընթացքում աղմուկի միջինացված մակարդակը կազմում է 52ԴԲԱ: Արդյունահանման աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակը չի գերազանցել 70ԴԲԱ-ն: Աշխատանքներն իրականացվել են ցերեկային ժամերին:

Բնակավայրերում աղմուկի մակարդակը չի չափվել, քանի որ դրանք գտնվում են 2.5-3 կմ հեռավորությունների վրա:

Հաշվետվությունն ու բացատրագիրը կազմեց ԱԶ Շ.Խաչատրյանը